2017-2018 ՈՒՍՏԱՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ընդհանուր ծնողական ժողովի 2017 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած նիստի.

Ժողովին մասնակցում էին դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը, տնօրենի տեղակալները, դասղեկները, ծնողները, դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Վարդան Քոչարյանը:

Օրակարգում՝

1. Տնօրենի հաղորդումը նախորդ ուսումնական տարվա արդյունքների և նոր ուսումնական տարվա անելիքների մասին:
2. Հաշվետվություն 2016-2017 ուստարվա ընթացքում ծնողխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. Դպրոցի ծնողխորհրդի և ծնողխորհրդի նախագահի ընտրություն:

1.Լսեցին- Նախորդ ուսումնական տարվա արդյունքների և նոր ուսումնական տարվա անելիքների հարցը:

Տնօրեն նաիրա Բաբայանը ամփոփեց 2016-2017 ուսումնական տարում կատարած աշխատանքները: Նա նշեց, որ արդյունավետությամբ է իրականացվել ուսումնական գործընթացը: Տնօրենության ուշադրության կենտրոնում է աշակերտների դաստիարակության գործընթացը, որի շնորհիվ ապահովվում է սովորողների բարձր կարգապահությունը: Կազմակերպվել են տարաբնույթ գեղարվեստական, երաժշտական, սպորտային միջոցառումներ, որոնք նպաստում են սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ֆիզիկական, ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Նաիրա Բաբայանը նշեց,որ դպրոցի ձեռքբերումների մեջ հատկապես կարևորվում են սպորտային հաջողությունները ՀՀ անկախության 25-րդ ամյակին նվիրված ՀՀ դպրոցականների մարզական խաղերում: Ծնողական խորհուրդների հետ մեկտեղ անցկացվել են էքսկուրսիաներ, արշավներ, կինո, թատրոն, մշակույթի օջախներ այցելություններ:

Դպրոցում շարունակվում են վերանորոգման, անհրաժեշտ գույքի ձեռքբերման աշխատանքները: Մեծ աշխատանք է կատարվել տարբեր բնույթի ֆինանսական և նյութական ռեսուրսներ դպրոցում իրականացվող գործընթացներում ներգրավելու ուղղությամբ: Դպրոցն իր տնտեսած ֆինանսական միջոցների հաշվին գրեթե լուծել է գույքի նորացման խնդիրը:

Որոշեցին.-Հավանություն տալ տնօրենի զեկուցմանը և կատարված աշխատանքները գնահատել գերազանց:

2.Լսեցին.-«Հաշվետվություն 2016-2017 ուստարվա ընթացքում ծնողխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ» հարցը՝ դպրոցի ծնողխորհրդի նախագահ Գալուստ Գալստյանի հաղորդմամբ:

Դպրոցի ծնողխորհուրդը ձևավորվել է տարեսկզբին դասարանական 23 ծնողխորհուրդների նախագահներից, և առաջին գործը, որին ձեռնամուխ է եղել սոցիալապես անապահով և ծնողազուրկ աշակերտների ցուցակի ճշտումը՝ կառավարության կողմից հատկացված դրամաշնորհի շրջանակներում կարիքավոր աշակերտներին անվճար դասագրքեր

տրամադրելու համար: Դպրոցի ծնողխորհուրդը, դասարանական ծնողխորհուրդները ակտիվորեն են մասնակցել դպրոցական արձակուրդների ժամանակ աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպման գործընթացին, նպաստել դպրոցի և ընտանիքի կապերի ամրապնդմանը: Ծնողխորհուրդը իրազեկ է երեխայի իրավունքների պաշտպանությանը ուղղված դպրոցի կողմից ծավալվող աշխատանքներին,այն հոգատարությանը,որ ցուցաբերվում է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ:

Որոշեցին.-Հավանություն տալ ծնողական խորհրդի նախագահ Գալուստ Գալստյանի հաշվետվությանը:

3.Լսեցին.-Դպրոցի ծնողխորհրդի, ծնողխորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության հարցը:

Դպրոցի ծնողական խորհուրդը ձևավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Արդեն տեղի են ունեցել դասարանների ծնողական ժողովները և ընտրվել են 23 դասարանների ծնողխորհուրդների նախագահներ,որոնք էլ կձևավորեն դպրոցի ծնողական խորհուրդը:

Տեղի ունեցավ թեկնածուների առաջադրում,փակ գաղտնի քվեարկություն:

Ծնողական ժողովը հաստատեց ծնողական խորհրդի հետևյալ կազմը.

1.Գալստյան Գալուստ(ծնողխորհրդի նախագահ)-8-րդ ա դաս.

2.Գուլամերյան Արմինե- 1-ին ա դասարան

3.Պետրոսյան Ռուզաննա- 1-ին բ դասարան

4.Վարդանյան Լիլիթ- 2-րդ ա դասարան

5. Ներսիսյան Անուշ- 2-րդ բ դասարան

6.Հարությունյան Շահանե- 3-րդ ա դասարան

7. Արուսյակ Սարգսյան- 3-րդ բ դասարան

8.Թադևոսյան Լիլիթ- 4-րդ ա դասարան

9.Ծառուկյան Մարինե- 4-րդ բ դասարան

10.Վարդանյան Անուշ- 5-րդ ա դասարան

11. Ավագյան Հրանուշ - 5-րդ բ դասարան

12.Մկրտչյան Ամալյա- 6-րդ ա դասրան

13.Համբարձումյան Աստղիկ- 6-րդ բ դասարան

14.Աբրահամյան Տաթևիկ- 7-րդ ա դասարան

15.Հովհաննիսյան Լիլիթ- 7-րդ բ դասարան

16.Մկրտչյան Ամալյա- 8-րդ բ դասարան

17.Բաբայան Տաթևիկ- 9-րդ ա դասարան

18. Ազիզյան Մարիամ- 9-րդ բ դասարան

19.Մովսիսյան Լուսինե- 10-րդ ա դասարան

20.Պետրոսյան Թեհմինե-10-րդ բ դասարան

21.Շահնազարյան Կարինե- 11-րդ ա դասարան

22.Հովհաննիսյան Լուսինե- 11-րդ բ դասարան

23.Ծառուկյան Նունուֆար-12-րդ ա դասարան

Որոշեցին.-Հաստատել 2017-2018 ուստարվա ծնողական խորհրդի վերոնշյալ կազմը՝ Գալուստ Գալստյանի նախագահությամբ և Հրանուշ Ավագյանի քարտուղարությամբ:

Ծնողխորհրդի նախագահ՝ Գալուստ Գալստյան

Քարտուղար՝ Հրանուշ Ավագյան

2017-2018 ՈՒՍՏԱՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2017 թվականի հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի նիստ :

Նիստին ներկա էին դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը, ծնողխորհրդի նախագահ Գալուստ Գալստյանը,դասարանների ծնողական խորհուրդների նախագահները:

Օրակարգում՝

1.2017 թվականին ատեստավորվող ուսուցիչների մասին ծնողական խորհրդի կողմից կարծիքներ տալու հարցը:

2.Անապահով ընտանիքների և ծնողազուրկ երեխաներին դասագրքերի վարձավճարներից ազատելու հարցը:

3. Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2018 թվականի եկամուտների և ծախսերի բյուջեի նախագծի քննարկում:

1.Լսեցին.-2017 թվականին ատեստավորվող ուսուցիչների մասին ծնողական խորհրդի կողմից կարծիքներ տալու հարցը:

Որոշեցին.-Հաշվի առնելով արտահայտած կարծիքները՝ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ներքոհիշյալ ուսուցիչների վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տալ բնութագրեր.

1.Հարությունյան Արմիկ Գուրգենի
2.Քոչարյան Վարդիթեր Վանիկի
3.Մարգսյան Արմենուհի Ղևոնդի
4.Մելիքյան Արամ Ժորայի

2.Լսեցին.- Անապահով ընտանիքների և ծնողազուրկ երեխաներին դասագրքերի վարձավճարներից ազատելու հարցը:

Որոշեցին.-Ծնողական խորհուրդների և դասղեկների կողմից
ներկայացված ներքոհիշյալ աշակերտներին ազատել
դասագրքերի վարձավճարներից.

| Հ/հ | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Դասարան | Գումար |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գևորգյան | Լուսինե | Կամոյի | 5ա | 3650 |
| 2. | Խաչատրյան | Լուսինե | Արմենի | 5ա | 3650 |
| 3. | Մառուկյան | Վարդան | Հայկի | 5ա | 3650 |
| 4. | Բադալյան | Հովհան | Արևշատի | 5բ | 3650 |
| 5. | Գալստյան | Աննա | Բենիկի | 5բ | 3650 |
| 6. | Մաթևոսյան | Միլենա | Համլետի | 6ա | 5060 |
| 7. | Մաթևոսյան | Անահիտ | Ջոհրաբի | 6ա | 5060 |
| 8. | Թանանյան | Արտաշես | Օհանի | 7ա | 6300 |
| 9. | Գալստյան | Նարինե | Բենիկի | 7ա | 6300 |
| 10. | Մաթևոսյան | Նարեկ | Ջոհրաբի | 7բ | 6300 |
| 11. | Հայրապետյան | Սարգիս | Ավթանդիլի | 7բ | 6300 |
| 12 | Իսրայելյան | Սուսաննա | Սեթի | 8ա | 6480 |
| 13. | Բադալյան | Արփինե | Գուրգենի | 8բ | 6480 |
| 14. | Հովհաննիսյան | Աստղ | Գոռիսի | 8բ | 6480 |
| 15. | Օհանյան | Էստելլա | Սերգեյի | 8բ | 6480 |
| 16. | Ստեփանյան | Կարո | Դիմիտրի | 8բ | 6480 |
| 17. | Բադալյան | Արշավիր | Գուրգենի | 9ա | 6800 |
| 18. | Խաչատրյան | Սուսաննա | Հայկի | 9ա | 6800 |
| 19. | Մաթևոսյան | Նվեր | Ջոհրաբի | 9բ | 6800 |
| 20. | Ալեքսանյան | Մերի | Կամոյի | 9բ | 6800 |
| 21. | Գևորգյան | Նվեր | Գեղամի | 9բ | 6800 |
| 22. | Պողոսյան | Գայանե | Ռաֆայելի | 9բ | 6800 |
| 23. | Դավթյան | Հասմիկ | Սուրենի | 10ա | 7100 |
| 24. | Հովհաննիսյան | Լիանա | Գոռիսի | 10բ | 7100 |
| 25. | Հովհաննիսյան | Գեղամ | Վիրաբի | 10բ | 7100 |
| 26. | Հայրապետյան | Աննա | Լեռնիկի | 11ա | 7200 |
| 27. | Ավետիսյան | Բորիկ | Անդրանիկի | 11ա | 7200 |
| 28. | Մարգարյան | Համեստ | Արթուրի | 11բ | 7200 |
| 29. | Սարգսյան | Գայանե | Աշոտի | 11բ | 7200 |
| 30. | Մկրտչյան | Նելլի | Պարույրի | 11ա | 3430 |
| | Ընդամենը | | | | 180300 |

3.Լսեցին.- Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան
միջնակարգ դպրոցի 2018 թվականի եկամուտների և ծախսերի
բյուջեի նախագծի քննարկման հարցը:

Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը՝ ներկայացնելով Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2018 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակը , որը կազմվել է մանկավարժական, աշակերտական, ծնողական խորհուրդների,կառավարման խորհրդի, լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում:

Որոշեցին.-Հավանություն տալ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2018 թվականի տարեկան բյուջեի նախագծին:

Ծնողխորհրդի նախագահ՝ Գալուստ Գալստյան

Քարտուղար՝ Հրանուշ Ավագյան